ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2012թ-ին Հայաստանի Հանրապետությունում գործել են թվով 96 հեռուստաընկերություն (որից 44-ը՝ վերգետնյա եթերային, 52-ը՝ կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող) և թվով 20 ռադիոընկերություն (Հավելված 1):

Եթերային հեռարձակում իրականացնող հանրապետական սփռման հեռուստաընկերությունները 8-ն են (որից 1-ը իրականացնում է վերահեռարձակում), մայրաքաղաքային սփռման՝ 10-ը (որից 3-ը իրականացնում են վերահեռարձակում), տարածքային սփռման՝ 10-ը, իսկ 16-ը գործում են մեկ մարզի տարածքում:

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններից 5-ը գործում են ք. Երևանում և մեկ կամ մի քանի մարզերում, 17-ը՝ ք. Երևանում, 30-ը՝ մեկ մարզի տարածքում:

Ռադիոընկերություններից 3-ը գործում են Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում, 14-ը՝ Երևան քաղաքի տարածքում, 3-ը՝ մեկ մարզի տարածքում:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային Հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012թ-ին տրամադրել է հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման թվով 9 լիցենզիա (Հավելված 2):

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը իր 2012թ. ապրիլի 3-ի թիվ 10-Ա որոշմամբ մերժել է հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնելու համար լիցենզիա ստանալու թվով մեկ դիմում, որը հետագայում բավարարվել է:

Հիմք ընդունելով լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ դիմումները, Հանձնաժողովը երկարաձգել է «ՉԱՊ», «ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊ ընկերությունների հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիաների գործողության ժամկետները մինչև 2015 թվականի հունվարի 1-ը, իսկ «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ», «ՌԱԴԻՈ ՀԱՅ», «ԱՎՏՈՌԱԴԻՈ», «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերությունների ռադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիաների գործողության ժամկետները՝ մինչև 2013թ. հուլիսի 20-ը:

Հանձնաժողովը կաբելային (մալուխային) հեռուստաընկերությունների կողմից ներկայացված պայմանագրերի հիման վրա ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն է տվել «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերությանը (20.08.2012թ.) և «ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊ ընկերությանը (10.10.2012թ.):

Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին դիմումների հիման վրա ուժը կորցրած են ճանաչվել թվով 3 լիցենզիա (Հավելված 3):

Ստորև ներկայացվում է հեռուստառադիոհեռարձակման նպատակով ՀՀ-ում հատկացված հաճախությունների և կապուղիների ամբողջական ցանկի վերաբերյալ տեղեկատվություն:

Տեղեկատվություն հեռուստահեռարձակման նպատակով ՀՀ-ում հատկացված կապուղիների վերաբերյալ.

հ/հ	սփռման տարածքը	հատկացված կապուղիների քանակը
1	ք. Երևան	18
2	Արագածոտնի մարզ	48
3	Արարատի մարզ	34
4	Վայոց Ձորի մարզ	138
5	Գեղարքունիքի մարզ	75
6	Լոռու մարզ	159
7	Կոտայքի մարզ	86
8	Տավուշի մարզ	145
9	Արմավիրի մարզ	15
10	Շիրակի մարզ	59
11	Սյունիքի մարզ	194

Տեղեկատվություն ռադիոհեռարձակման նպատակով ՀՀ-ում հատկացված հաճախությունների վերաբերյալ.

հ/հ	սփռման տարածքը	հատկացված հաճախությունների քանակը
1	ք. Երևան	18
2	Արագածոտնի մարզ	6
3	Արարատի մարզ	4
4	Վայոց Ձորի մարզ	6
5	Գեղարքունիքի մարզ	9
6	Լոռու մարզ	10
7	Կոտայքի մարզ	3

8	Տավուշի մարզ	9
9	Արմավիրի մարզ	2
10	Շիրակի մարզ	8
11	Սյունիքի մարզ	12
12	Հայաստանի Հանրապետություն	3

2012թ-ին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 127068.52 հազար ՀՀ դրամ, այդ թվում 124294.00 հազար դրամ պետական տուրք (հեռուստառադիոծրագրերի հեռարձակման համար տարեկան, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման համար սահմանված պետական տուրքեր), 2774.52 հազար դրամ՝ տարեկան պետական տուրքի չվճարված գումարի նկատմամբ հաշվարկված տույժ (Հավելված 4):

Հեռուստահաղորդումների հեռարձակման հաճախությունների համաձայնեցումից հետո վեցամսյա ժամկետում հեռուստահաղորդումների հեռարձակման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և հեռարձակման ցանցեր տեղադրելու, ինչպես նաև լիցենզիան ստանալուց հետո վեցամսյա ժամկետում հեռուստահաղորդումներ հեռարձակելու պարտավորությունները չկատարելու հետևանքով Հանձնաժողովը 2011թ-ի նոյեմբերի 17-ի թիվ 39-Ա որոշման համաձայն 22.12.2011թ-ին դիմել էր ՀՀ վարչական դատարան՝ «ԱՐՓԱԻՆՖՈՐՄ» ՍՊ ընկերությանը տրված հեռուստածրագրերի եթերային հեռարձակման թիվ 155 առ 10.01.2011թ. լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին հայցով: 2012թ. փետրվարի 6-ին հրապարակված վճռի համաձայն (ուժի մեջ է մտել 06.03.2012թ.) հայցն ամբողջությամբ բավարարվել է, որից հետո 2012թ. հունիսի 7-ին Հանձնաժողովը հայտարարել է թվային հեռարձակման ցանցի միջոցով տարածքային սփռման (Վայոց ձորի մարզ), ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների արտահերթ մրցույթ, սակայն մրցույթին մասնակցելու հայտ չներկայացվելու հետևանքով Հանձնաժողովի 2012թ. սեպտեմբերիի 11-ի թիվ 29-Ա որոշմամբ մրցույթը հայտարարվել է չկայացած:

2012 թվականի մայիսի 11-ին Հանձնաժողովը ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով նախատեսված պահանջները խախտելու համար հարուցել է վարչական վարույթներ՝ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ–ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» («Կենտրոն» հեռուստաընկերություն) և «ՀՈՒՍԱԲԵՐ» («Երկիր Մեդիա» հեռուստաընկերություն) ՓԲ ընկերություններին վարչական պատասխանատվության՝ գրավոր նախազգուշացում

հայտարարելու վերաբերյալ: Հանձնաժողովի 18.05.2012թ-ի թիվ 18-Ա և թիվ 19-Ա որոշումներով «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ–ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» և «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերությունների նկատմամբ վարչական վարույթները կարճվել են:

2012 թվականին Հանձնաժողովը ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները խախտելու համար 11.05.2012թ-ի թիվ 17–Ա որոշմամբ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ–ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել է վարչական տույժ՝ տուգանելով նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով: 2012թ-ի մայիսի 31-ին ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ–ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Հանձնաժողովի՝ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ–ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության նկատմամբ տուգանք կիրառելու մասին Հանձնաժողովի 11.05.2012թ. թիվ 17-Ա որոշումն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 20.12.2012թ-ի վճռով հայցը մերժվել է (ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 20.02.2013թ.-ին կայացրել է որոշում՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին):

2011թ-ի մայիսի 18-ին ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մի խումբ ուսանողների հայցադիմումն ընդդեմ Հանձնաժողովի՝ վերջինիս անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և Հանձնաժողովին «Արմենիա Թի-Վի» («Արմենիա» հեռուստաընկերություն) ՓԲԸ-ի նկատմամբ անբարեխիղճ գովազդ հեռարձակելու համար գրավոր նախազգուշացում կիրառելուն և անբարեխիղճ գովազդի հեռարձակումը արգելելուն պարտավորեցնելու պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանի 15.02.2012թ-ի վճռով հայցը բավարարվել է ամբողջությամբ: (ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 11.03.2013թ.-ին կայացրել է որոշում՝ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու, դատավարական իրավունքը վերականգնելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին):

2011թ-ի ապրիլի 18-ին ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպության հայցադիմումն ընդդեմ Հանձնաժողովի՝ վերջինիս գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և 21.02.2011թ-ի Ել. N-30 գրությամբ պահանջվող բոլոր փաստաթղթերը տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 27.09.2011թ-ի վճռով հայցը մերժվել է: 2011 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից վարույթ է ընդունվել «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպության կողմից բերված

վերաքննիչ բողոքը, որը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.02.2012թ. որոշմամբ բավարարվել է մասնակի՝ բեկանվել է ՀՀ վարչական դատարանի 27.09.2011թ. վճիռը և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: ՀՀ վարչական դատարանի 03.08.2012թ. վճռով «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպության հայցը բավարարվել է մասնակի՝ ոչ իրավաչափ է ճանաչվել Հանձնաժողովի՝ հեռուստաընկերությունների աշխատակիցների անձնական թերթիկների տրամադրումը մերժելու գործողությունը: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 10.09.2012թ. վարույթ է ընդունել «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպության կողմից ՀՀ վարչական դատարանի 03.08.2012թ-ի վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.12.2012թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և ՀՀ վարչական դատարանի 03.08.2012թ. վճիռը թողնվել է անփոփոխ (ՀՀ վճռաբեկ դատարանը 06.02.2013թ.-ին կայացրել է որոշում՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին):

Հանձնաժողովը 2012 թվականի ընթացքում իր գործունեության հետ կապված ընդունել է հետևյալ իրավական ակտերը՝

14.03.2012թ-ի թիվ 9-Ա որոշմամբ հաստատվել է «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից համապետական և Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ ապահովելու գնահատման մեթոդաբանությունը», իսկ 27.12.2012թ-ի թիվ 38-Ա որոշմամբ՝ «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող թեկնածուների համար հավասար պայմաններ ապահովելու գնահատման մեթոդաբանությունը»:

Հանձնաժողովի կողմից 2012 թվականի օգոստոսի 20-ին տրվել է թիվ 1 պաշտոնական պարզաբանումը՝ «Հեռարձակողի (վերահեռարձակողի) կողմից այլ անձի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի հնարավորությունները օգտագործելու մասին»:

Հանձնաժողովը իր վերահսկողական գործառույթն իրականացնելու նպատակով կատարել է հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ծրագրերի 2100 և տարածքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների 1860 օրերի ուղղակի դիտարկումներ:

Հանձնաժողովը ստացել և ուսումնասիրել է հեռուստառադիոընկերությունների հաշվառման մատյանների տվյալները, վարել է դրանց տեղեկատվական բազան, իրականացրել է իր ուղղակի դիտարկումների և ընկերությունների կողմից տրամադրվող տեղեկատվության համադրում, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերի հեռարձակման օրինականությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն:

2012թ.-ին Հանձնաժողովը ներգրավված է եղել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի լրամշակման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից ստեղծված աշխատանքային խմբի, ինչպես նաև ՀՀ տարածքում ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքներում:

Հանձնաժողովը համագործակցել է հայաստանյան հասարակական և միջազգային մի շարք կազմակերպությունների հետ: Տեղի են ունեցել հանդիպումներ 2012թ. մայիսի 6-ին կայացած ԱԺ ընտրություններին, ինչպես նաև 2013թ. փետրվարի 18-ին կայացած ՀՀ Նախագահի ընտրություններին ԵԱՀԿ/ԺՄՀԻԳ, ԱՊՀ դիտորդական առաքելության իրականացնող պատվիրակության, ինչպես նաև ՀՀ-ում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

2012 թ. Հանձնաժողովը ներգրավված է 2012թ. մարտի 4-ին կայացած ՌԴ Նախագահի ընտրություններին ԱՊՀ դիտորդական առաքելություն իրականացնող պատվիրակության կազմում:

Հանդիսանալով Կարգավորող Մարմինների Եվրոպական Պլատֆորմի անդամ-երկիր՝ Հանձնաժողովը 2012 թ. մասնակցել է (EPRA) 35-րդ (գարնանային) և 36-րդ (աշնանային) նստաշրջաններին, ինչպես նաև, հանդիսանալով Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների ֆորումի (BRAF) անդամ –երկիր, մասնակցել է հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների տարեկան ֆորումին:

2012 թ.-ին Հանձնաժողովը մասնակցել է ԵԱՀԿ հրավերով հեռուստառադիոոլորտը կարգավորող մարմինների համաժողովին, ԵՄԱ կողմից կազմակերպված «Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի շրջանակներում «Ընտրական գործընթացների լուսամանումը ՀՀ-ում» թեմայով հանդիպմանը, ԵՄ և ԵԽ հրավերով «Հարավային

Կովկասում և Մոլդովայում Լրատվամիջոցների ազատության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության խթանում» թեմայով սեմինարին, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հեռուստառադիոոլորտը կարգավորող մարմինների միջև համագործակցության խթանման նպատակով հանդիպմանը

2012 թ. Հանձնաժողովը անդամակցել է ԵՄ և ԵԽ աջակցությամբ ստեղծված Եվրոպական Մեդիա Ֆորում (CMFE) կազմակերպությանը:

2012 թ. Հանձնաժողովը անդամակցել է, այնուհետև մասնակցել ՅՈՒՆԵՍԿՈ-ի (UNESCO) վիճակագրության ինստիտուտի (UIS) կողմից կազմակերպված անդամ-երկրների հեռուստառադիոոլորտը կարգավորող մարմինների վիճակագրական տվյալների հետազոտական խմբի աշխատանքներին:

2012 թ. Հանձնաժողովը ներգրավված է եղել ՀՀ նախագահի 2010թ. հուլիսի 15-ի ՆԿ-115-Ա կարգադրությամբ Հայաստանի Հանրապետության և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների համար ստեղծված պատասխանատու բանակցային թիմի, ինչպես նաև տնտեսական, ֆինանսական և ոլորտային համագործակցության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի լրամշակման նպատակով ստեղծված, ՀՀ Վարչապետի 2011 թ հունիսի 28-ի N 598 - Ա որոշմամբ Մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու և ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկման ընթացակարգի համաձայն ստեղծված Հայաստանի Հանրապետության ազգային միջանկյալ զեկույցը նախապատրաստող միջգերատեսչական հանձնաժողովի, ՀՀ Վարչապետի 08.02.2012 թիվ 75-Ա որոշմամբ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին ներկայացվելիք՝ ՀՀ 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցը մշակելու նպատակով ստեղծված միջգերատեսչական համձնաժողովի, ինչպես նաև, ՀՀ տարածքում ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքային խմբերում:

2012թ. ընթացքում Հանձնաժողովը գումարել է 25 նիստ, որում ընդունվել է 39 անհատական որոշում:

ՀՈԱՀ աշխատակազմում մուտքագրվել է 746 գրություն, պատասխանվել է 475-ին:

Հանձնաժողովը իր դիրքորոշումն է հայտնել 11 ՀՀ օրենքների և 9 միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի նախագծերին:

ՀՀ քաղաքացիներից և կազմակերպություններից ստացվել է 20դիմում-բողոք (հեռուստաընկերությունների հաղորդումների անվորակ լինելու, լեզվի անարատության, անբարեխիղճ գովազդ հեռարձակելու մասին և այլն) որոնց պատասխանվել է համաձայն գործող օրենսդրական ակտերին:

2012թ ընթացքում ՀՌԱՀ աշխատակազմը անցկացրել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար 2 մրցույթ: 9 քաղաքացիական ծառայողներ ատեստավորվել են և 13 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են:

Հավելված 1

Եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններ

հ/հ	եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններ	սփռման տարածքը
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	հանրապետական
2	«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	հանրապետական
3	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	հանրապետական
4	«ՇԱՆԹ» ՍՊԸ	հանրապետական
5	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	հանրապետական
6	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	հանրապետական
7	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	հանրապետական
8	«ԱՆՍՎԵՐ» ՍՊԸ	Հանրապետական (վերահեռարձակում)
9	«ՄԻՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	մայրաքաղաքային
10	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	մայրաքաղաքային
11	«ԵՐԵՎԱՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ Ը	մայրաքաղաքային
12	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆ» ՓԲԸ	մայրաքաղաքային
13	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	մայրաքաղաքային
14	«ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ	մայրաքաղաքային
15	«ԿԱՅՄ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	մայրաքաղաքային (վերահեռարձակում)
16	«ՊԱՐԱԴԻԶ» ՍՊԸ	մայրաքաղաքային (վերահեռարձակում)
17	«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ	մայրաքաղաքային (վերահեռարձակում)
18	«ՇԱՐԿ» ՍՊԸ	մայրաքաղաքային
19	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ	ՀՀ Շիրակի մարզ
20	«ՏԱՎՈՒՇ-ՏՎ» ՍՊԸ	տարածքային (ՀՀ Տավուշի մարզ)
21	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	տարածքային (ՀՀ Լոռու մարզ)
22	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	տարածքային (ՀՀ Գեղարքունիքի մարզ)
23	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ	տարածքային (ՀՀ Արարատի մարզ)
24	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱՋԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ	տարածքային (ՀՀ Արմավիրի մարզ)

25	«ԱԲՈՎՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	տարածքային (ՀՀ Կոտայքի մարզ)
26	«ՑԱՅԳ» ՍՊԸ	տարածքային (ՀՀ Շիրակի մարզ)
27	«ՉԱԳԵՋՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	տարածքային (ՀՀ Սյունիքի մարզ)
28	«ԵՐԵՎԱՆ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	տարածքային (ՀՀ Արագածոտնի մարզ)
29	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ	ք. Վանաձոր
30	«ՆԱՐԵԿ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Աբովյան
31	«ԼՈՒՍԱԼԻՔ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Չարենցավան
32	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Արմավիր
33	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր
34	«ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ	ք. Էջմիածին
35	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	ք. Վանաձոր
36	«ՍԻՐԱԿ» ՍՊԸ	ք. Հրազդան
37	«ԼԱՍՏԻ ԽՈՒՏ» ՍՊԸ	ք. Գորիս
38	«ՈՐՈՏԱՆՅԱՆ ՂՈՂԱՆՁՆԵՐ» ՍՊԸ	ք. Սիսիան
39	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ	ք. Ալավերդի
40	«ՔԱՄՈՒՏ» ՍՊԸ	ք. Նոյեմբերյան
41	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ	ք. Վանաձոր
42	«ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ	ք. Իջևան
43	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ	ք. Սպիտակ
44	«ՉԱՊ» ՍՊԸ	ք. Գյումրի

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններ

h/h	կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններ	սփռման տարածքը
1	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ	ք. Երևան
2	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ք. Երևան, Սյունիքի մարզ

3	«ԿԱԲԵԼԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ	ք. Երևան
4	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան
5	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Ագարակ
6	«ՏԵԼԵՊՈՐՏ» ՍՊԸ	ք. Երևան
7	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ք. Վանաձոր
8	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սիսիան
9	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր
10	«ՄՄՏ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Գյումրի
11	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ
12	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ք. Նոր Հաճն
13	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	ք. Գորիս
14	«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան
15	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի
16	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	ք. Աբովյան
17	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան
18	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սևան
19	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում
20	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ք. Չարենցավան
21	«ԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ» ՍՊԸ	ք. Երևան
22	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր, ք. Մեծամոր
23	«ՎԻԳԵԴՈ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն
24	«ԱՐԼՈՔՆԵԹ» ՍՊԸ	ք. Արարատ
25	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ
26	«ԺԱՄԱՐՏԵ» ՍՊԸ	ք. Երևան
27	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն
28	«ՔՅԱՎԱՌԻ ՀՈՒՅՍ» ՍՊԸ	ք. Գավառ
29	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	ք. Երևան
30	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Արմավիր
31	«ՄԵԴԱԼՍԱՆ» ՍՊԸ	ք. Բյուրեղավան
32	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան
33	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան
34	«ՆԱՏՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան

35	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Երևան
36	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն
37	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	ք. Վանաձոր
38	«ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	ք. Երևան
39	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ
40	«ԲԵՏԱ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան
41	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան
42	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Գյումրի, ք. Արթիկ
43	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ք. Նոր Հաճն
44	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ք. Եղվարդ
45	«ԴԻԶԻ ԹՎ» ՍՊԸ	ք. Մասիս
46	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան
47	«ՍԹՐԻՄԶՈՆ» ՍՊԸ	ք. Երևան
48	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ
49	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ
50	«ԱՐԹ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ
51	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան
52	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն

Ռադիոընկերություններ

h/h	ռադիոընկերություններ	սփռման տարածքը
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ (1-ին ծրագիր)	ք. Երևան, մարզեր
2	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ (2-րդ ծրագիր)	ք. Երևան
3	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ	ՀՀ Շիրակի մարզ
4	«ՎԵՄ ՍՓՅՈՒՌ» ՍՊԸ	ք. Երևան
5	«ՖՄ-102.4» ֆրանսիական ծրագիր	ք. Երևան
6	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻԶՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	ք. Երևան, մարզեր
7	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	ք. Երևան

8	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ	ք. Երևան
9	«ՌԱԴԻՈ-ՀԱՅ» ՍՊԸ	ք. Երևան, մարզեր
10	«ՌԱԴԻՈ – ԱԼՖԱ» ՍՊԸ	ք. Երևան
11	«ՖՄ-105.5» ՍՊԸ	ք. Երևան
12	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	ք. Երևան
13	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ	ք. Երևան
14	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ	ք. Երևան
15	«ՇԱՆԹ» ՍՊԸ	ք. Գյումրի
16	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	ք. Վանաձոր
17	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	ք. Երևան
18	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ	ք. Երևան
19	«ՌԱԴԻՈ ՊՈՌՈ» ՍՊԸ	ք. Երևան
20	«ՈՒԼԻՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Երևան

Հավելված 2

h/h	հեռուստաընկերության անվանումը	սփռման տարածքը	որոշումն ընդունելու ամսաթիվը
1	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	ք. Մասիս, ք. Արտաշատ, ք. Վեդի, ք. Արարատ	17.01.2012թ.
2	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	25.04.2012թ.
3	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	21.05.2012թ.
4	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	11.06.2012թ.
5	«Է3-ԱՓ» ՓԲԸ	ք. Երևան	11.06.2012թ.
6	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	15.10.2012թ.
7	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	01.11.2012թ.
8	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Սյունիքի մարզ	06.12.2012թ.
9	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	27.12.2012թ.

Հավելված 3

h/h	հեռուստաընկերության անվանումը	սփռման տարածքը	որոշումն ընդունելու ամսաթիվը
1	«ՌԱՖՆԱՍ» ՍՊԸ	ք. Արտաշատ	11.06.2012թ.
2	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	ք. Երևան	15.10.2012թ.
3	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ք. Մարտունի, գ. Վաղաշեն	27.12.2012թ.

Հավելված 4

հ/հ	հեռուստառադիոընկերության անվանումը	հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար գանձված պետական տուրք (տույժ) (ՀՀ դրամ)	
		պետական տուրք	տույժ
1	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ	50000	
2	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	100000	
3	«ԲԵՏԱ-ԹԻՎԻ» ՍՊԸ	400000	28000
4	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	534000*	418188
5	«ՇԱՆԹ» ՍՊԸ	20000000	
6	«ԹԵՎ» ՍՊԸ	150000	
7	«ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ	50000	
8	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ	100000	
9	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ	50000	
10	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ	203000*	91250
11	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	50000	4250
12	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ	1000000	
13	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ	50000	
14	«ԱՐԼՈՔՆԵԹ» ՍՊԸ	100000	
15	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	100000	
16	«ՆԱՐԵԿ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	100000	15000
17	«ՉԱՊ» ՍՊԸ	53000*	
18	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	103000*	
19	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ	100000	
20	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ	103000*	
21	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	20000000	
22	«ՎԻԳԵՌՈ» ՓԲԸ	500000	
23	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	100000	
24	«ԿԱՅՄ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ		772500

25	«ՇԱՐԿ» ՍՊԸ	10000000	9811
26	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	150000	
27	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	100000	
28	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	100000	
29	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	100000	1900
30	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	10000000	
31	«ԼՈՒՍԱԼԻՔ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	50000	6500
32	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	100000	500
33	«ՄՄՏ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	100000	
34	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	100000	
35	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	200000	1000
36	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	100000	
37	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ	100000	
38	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ	100000	
39	«ՁՈՐԻ ԿԱՆՉ» ՍՊԸ	98000**	226280
40	«ԺԱՄԱՐՏԵ» ՍՊԸ	400000	
41	«Է3-ԱՓ» ՓԲԸ	800000	448000
42	«ՏԵԼԵՊՈՐՏ» ՍՊԸ	400000	
43	«ԿԱԲԵԼԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ	400000	82500
44	«ԹԻՎԻՆԵՏ» ՓԲԸ	400000	
45	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	500000	
46	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	100000	5500
47	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	100000	
48	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	100000	300
49	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	100000	1000
50	«ՌԱԴԻՈ - ԱԼՖԱ» ՍՊԸ	100000	
51	«ԱՐՓԱԻՆՖՈՐՄ» ՍՊԸ		135000
52	«ԵՐԵՎԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	10000000	
53	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	10000000	

54	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	400000	
55	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	100000	
56	«ԼԱՍՏԻ ԽՈՒՏ» ՍՊԸ	50000	
57	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	1000000	
58	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	900000	
59	«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊԸ	400000	42000
60	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	20000000	
61	«ՈՐՈՏԱՆՅԱՆ ՂՈՂԱՆՁՆԵՐ» ՍՊԸ	50000	
62	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	600000**	
63	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	100000	3000
64	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	100000	
65	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	50000	
66	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	1000000	10000
67	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ	50000	
68	«ՑԱՅԳ» ՍՊԸ	1000000	
69	«ԱԲՈՎՅԱՆ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	1000000	4540
70	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	100000	2000
71	«ԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ» ՍՊԸ	400000	
72	«ՖՄ-105.5» ՍՊԸ	100000	
73	«ԱՐԱՑ» ՍՊԸ	500000	
74	«ՔՅԱՎԱՌԻ ՀՈՒՅՍ» ՍՊԸ	100000	
75	«ՍԻՐԱԿ» ՍՊԸ	50000	
76	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	400000	
77	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	400000	
78	«ՄԵԴԱԼՍԱՆ» ՍՊԸ	100000	
79	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	400000	
80	«ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ	50000	24000
81	«ՆԱՏՆԵՏ» ՍՊԸ	400000	
82	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	400000	

83	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	500000	
84	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	100000	
85	«ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	400000	178000
86	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	100000	
87	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	1000000	
88	«ՏԱՎՈՒՇ -ՏՎ» ՍՊԸ	1000000	150000
89	«ՍԹՐԻՄԶՈՆ» ՍՊԸ	400000	10000
90	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	100000	
91	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	400000	50000
92	«ԴԻԶԻ ԹՎ» ՍՊԸ	100000	
93	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	100000	52500
94	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	100000	1000
95	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ	1000000	
		124294000	**2774519**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**127068519**	

* - վճարվել է լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման համար (3 000 ՀՀ դրամ)
**- վճարվել է տարեկան պետական տուրքի համար կանխավճար: